

ԳԼՈՒԽ ԺԱ ԽՈՒԹԵՑԻ ՉՕՐԱՎԱՐՆ ԵՒ ՅԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏՆ

Այրիլ ամիսն եկաւ, բայց ո՞վ իմացաւ գարունը այդ սոսկալի տարին, ո՞վ տեսաւ գարնանաբեր թռչունը. գուժաբերք Բաղէշու կողմէն իրարու վրայ կը հասնէին եւ լուր կը բերէին ի Սասուն թէ արաբացի ահագին բանակը ուղղակի կ'ուզար նախ խուլթեցիք բնաջինջ ընելու, Ապուսէթի որդուոյն վրէժն հանելու համար: Եւ իրօք չափազանցութիւն չի կար այդ պատմութեան մէջ, վասնզի ամիրապետը բոլոր մահմեդական զօրութիւնը ոտք հաներ էր հարուածելու, պատմելու եւ բնաջինջ ընելու համար Յայաստան: Ասորիք, բաբելացիք, Թուրքաստան, Խուժաստան, մարք, իսլամացիք, եգիպտացիք եւ Տաճկաստանի խորերը մինչեւ Սակաստան իրենց զօրաց ընտիրները դրկել էին Յայոց երկիրը անապատացնելու համար: Ամիրապետը բոլոր զօրաց առջեւ իւր Բուղայ Սպարապետին խստիւ հրաման էր տուած «Սովով եւ սրով եւ գերութեամբ ելնել Յայոց աշխարհին վրայ աղատքը եւ ազատորդիքը իրեն դրկել, գեղեցիկներն ուրացնել, ռամիկն ի չիք դարձնել եւ երկիրը ժառանգել» այսպիսի հրամաններով կ'ուզային Յայաստան այդ խուժադուժ ժողովրդոց արիւնախանձ ամբոխը:

Իսկ Սասուն ի՞նչ կ'ըներ այն միջոցին:

Սասուն միաբան, անխռով մարդու մը վրայ աչքերը յառեալ կը սպասեր թէ նա ի՞նչ պիտի հրամայէր, եւ այդ մարդը գիտենք թէ Յովնանն էր, որ բոլոր կիրճերը ամրացնել տուեր էր, պահապաններ բաժներ լեռներուն անառիկ կողմերը, կանայք, տղաք եւ ծերերը ապահովել էր իրենց բոլոր աղքատին ստացուածով եւ պաշարով, եւ ինք քանի մը հազար հոգուոյ ընտիր խումբով խուլթի ստորոտը բանակեալ՝ դարանամուտ կը սպասեր անսասան, որ թշնամին գա: Եւ թշնամին կ'ուզար բազմութեամբ երեք առաջ բաժնած իւր բանակը, իբրեւ թէ խուլթայ լեռներն անհետացնելու եւ շնչաւոր կենդանի մարդ չի թողլու համար հոն: